ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 փետրվարի 2026 թվականի N 44 -Ա

ՍՈՒՐԵՆ ՔԵՍԵՋՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ, 7-րդ և 9-րդ կետերը՝

ո ր ո շ ու մ եմ

1. ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական Սուրեն Քեսեջյանին ս/թ փետրվարի 5-ից 6-ը գործուղել ք. Երևան՝ ՀՀ կառավարության նիստին Սյունիքի մարզպետի մասնակցությունը տրանսպորտային միջոցով ապահովելու նպատակով:

2. Գործուղումն իրականացնել Տոյոտա Կրաուզեր մակնիշի 041 ԼԼ 55 պետհամարանիշի ավտոմեքենայով:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ. Աբգարյանին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գործուղման ծախսերի հաշվարկումը և վճարումը:

4. Ս. Քեսեջյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2026-02-05 14:17:53 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. փետրվարի 5
ք. Կապան